Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, հուլիս – օգոստոս 2024, № 2 (62), БАРЕГОРЦ

ՆՎԻՐՈՒՄՈՎ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Մեծ տերությունների շահախնդիր քմահաճույքով և պատմական դաժան ճակատագրի բերումով մեր հայրենիքը մասնատվել է, մահվան գերանդուց փրկված բնավեր ժողովուրդը՝ ցրվել աշխարհով մեկ: Հենց այդ պատճառով է, որ զրկվել ենք մեր մեծ հայրենիքի պատմական տարածքներից, հայությունը սփռվել է աշխարհով մեկ, և գաղթօջախներում հայերն ավելի շատ են, քան բգկտված, մի բուռ մնացած բուն հայրենիքում՝ ներկայիս Հայաստանի Հանրապետությունում: Արդարության ծարավի հայությունը նախորդ դարեվերջին հզոր զարթոնք ապրեց, մեծ հաղթանակների բերկրանքին վերջին տարիներին հաջորդեցին ցավալի կորուստներ ու դառն հիասթափություններ: Հայաստանն այսօր լավագույն օրեր չի ապրում. բարդ ու լարված է երկրի քաղաքական արտաքին իրավիճակը, անհանգիստ է ներքին կյանքը, և ապագայի հեռանկարն էլ շատ մշուշոտ. պատերազմից դժվար ապաքինվող վերքեր, անդառնալի մարդկային ու տարածքային կորուստներ…

Դժվար ու նեղ վիճակ, որ մտահոգում, անհանգստացնում է նաև սփյուռքի մեր եղբայրներին ու քույրերին: Սակայն անհույս չէ մեր ապագան. աշխարհացիր հայության միասնական կամքը մեր բարոյահոգեբանական ամուր ու կայուն հենարանն է: Լավ ուղեցույց է. Հույսի մի ծիլն արժե գարուստ մի գարնան,- ասել է բանաստեղծը: Ծանր կորուստներից հետո այսօր ունենք բազում «հույսի ծիլեր»:

Ամերիկահայ Նիկողայոս Ազուլյանն ու կանադահայ Խորեն Մարդոյանը նոր անուններ չեն և հանրությանը վաղուց հայտնի են հայրենիքին ու հայությանը ամեն կերպ իրենց հնարավորություններով անսակարկ օգտակար լինելու պատրաստակամությամբ: Նրանք իրենց դրսևորել են և՛ Արցախի հայաթափումից առաջ, և՛ հետո, երբ տեղահանված արցախցիները ապաստանեցին ՀՀ տարբեր բնակավայրերում:

Վերջերս Երևանում էին մեր հիմնադրամի լավ բարեկամները՝ ամերիկահայ Նիկողայոս (Նիկ)Ազուլյան և կանադահայ Խորեն Մարդոյանը: Նրանց հետ Գուրգեն Մելիքյանի և մեր հանդիպումից ու զրույցից ստորև դրվագներ ենք ներկայացնում մեր ընթերցողին:

Խորեն Մարդոյան և Նիկ (Նիկողայոս) Ազուլյան

ԹՂԹԱԿԻՑ – Բարև Ձեզ, պրն Նիկողայոս Ազուլյան, ինչպես գիտեք, ես «Բարեգործ» պաշտոնաթերթի խմբագիրն եմ: Անշուշտ, հիշում եք մեր նախորդ հանդիպումը 2022 թ. օգոստոսին Ստեփանակերտում՝ «Արփեն» Մայր և Նորածին կենտրոնում և «Պարկ» հյուրանոցում: Այն ժամանակ Դուք Արցախում էիք՝ տեղում Ձեր անմիջական աջակցությունը արցախցիներին ցուցաբերելու առաքելությամբ: Այսօր Արցախը հայազրկված է, մեր քույրերն ու եղբայրները, նրանց ծնողներն ու երեխաները մահվան սպառնալիքի տակ հազիվ են իրենց կյանքը փրկել և տնազուրկ ու հայրենազուրկ՝ ապաստան գտել ՀՀ տարբեր բնակավայրերում: Սա, ինչպես տեսնում ենք, սոցիալ-քաղաքական այլ իրավիճակ է՝ անհամեմատ ավելի բարդ, քան նախկինը …

Ահա այսօր Դուք Երևանում եք, ու մենք կրկին հանդիպում ենք, և բարեբախտություն է, որ միասին ենք կանադահայ մեր հայրենակից Խորեն Մարդոյանի ու պրոֆեսոր

Գուրգեն Մելիքյանի հետ, որը գործադիր տնօրենն է իր իսկ անունով մկրտված «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»:

Հայրենիքից դուրս ապրող ամեն հայորդի, իմ համոզմամբ, Հայաստանի ու իր ազգակիցների հանդեպ ունի ձգողական անբացատրելի ուժ ունեցող որդիական պարտավորություններ ու պարտականություններ: Կարծում եմ՝ այդ անտեսանելի զորությունն է ձեզ կրկին Հայաստան բերել, և ձեր այցելության նպատակը չի փոխվել. պարզապես արցախցիներին օգնելու ձեր առաքելությունը հիմա պիտի Հայաստանում իրագործեք:

Ասացե՛ք, խնդրեմ, ինչպե՞ս եք տեսնում Երևանն այսօր, ո՛ւր կտանի մեզ իրադարձությունների ընթացքը և ի՛նչ ծրագրեր ունեք արցախցիներին օգնելու:

Ն. Ազուլյան և Գ. Մելիքյան

ԱԳՈՒԼՅԱՆ Ն.– Շատ դժվար հարցադրում է, լիարժեք պատասխանելը՝ նույնպես: Մի բան հաստատ է. մենք հայրենիքի նեղ պահերին միշտ նրա կողքին ենք:

Ճշմարիտ եք, Արցախի հայությանն օգնելու մեր նպատակը չի փոխվել, ընդհակառակը, նոր իրավիճակն ավելացրել է մեր պատասխանատվությունն ու նպատակադրումները: Իմ տեսակետն է՝ արդար է, որ բոլորի պես պետք է օգնենք Արցախից բռնագաղթված մեր եղբայրներին ու քույրերին առավել ևս հիմա, երբ նրանք դարձել են Հայաստանի հանրության, մեր հասարակության մի կարևոր մասը: Նրանց օգնելը մեր մարդկային ու բարոյական պարտքն է: Հենց դրա համար ենք ես, Խորեն Մարդոյանն ու սփյուռքի մեր մյուս հայրենակիցները Երևանում:

Գործընթացը շարունակական է: Մենք օգնել ենք և օգնելու ենք մեր հարազատներին: Արցախի հայաթափման ու բռնազավթման աղետը համայն հայությանն ավելի պիտի համախմբի ու հզորացնի, որ կարողանանք դիմագրավել թշնամական ուժերի մարտահրավերներին:

Այս առավոտ ինքս առերեսվեցի մեր պատմության հետ և ճշտեցի, որ 1988-ի երկրաշարժից հետո ծնունդ առավ Հայաստանի ամերիկյան համալսարանը: Հուսով եմ՝ այս աղետներից հետո էլ մի լավ բան կհառնի Հայաստանում:

ԹՂԹ. – Պրն. Ազուլյան, Դուք, անշուշտ, ծանոթ եք Գուրգեն Մելիքյանին և նրա ղեկավարած «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին». ինչպե՞ս եք գնահատում նրա գործունեությանը, ի՞նչ է Ձեր կարծիքը նրա մասին:

ԱԳՈՒԼՅԱՆ Ն. – Ֆանտաստի՛կ: Ծանոթ եմ 2001 թվականից: Այն ժամանակ Գ. Մելիքյանն ինքն է կազմակերպել մեր ուղևորությունը դեպի Արցախ: Վերջին անգամ Արցախում եղել եմ նրա հետ Ձեր հիշած ժամանակում՝ 2022 թ. օգոստոսին:

Լավ հիշեցրիք. մեր նախորդ հանդիպման ժամանակ Ստեփանակերտում ես տեսա, թե ի՛նչ հսկայածավալ ազգանվեր գործ է իրականացնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը», որն օգնել է Արցախում պատկառելի թվով հայ երեխաների լույս աշխարհ գալուն: Որքա՞ն է ստույգ թիվը, պրն. Մելիքյան:

ՄԵԼԻՔՅԱՆ Գ.– Այո՛, 1995 թ. Նաջարյանների հիմնած և հետո մեր հիմնադրամի հոգածությանը հանձնված «Արփեն» կենտրոնի աջակցությամբ Արցախում մինչ օրս ծնվել ու խնամվել է 37 873 հայ երեխա: Նրանցից շատերն են դարձել Արցախի պաշտպանության բանակի զինվորներ: Համազգային այդ հաջողության համար շատ հարցերում մեծ է և սփյուռքահայ բարերարների, որոնց թվում և ձեր ներդրումը, որի համար անսահման շնորհակալ ենք:

Խ. Մարդոյան և Գ. Մելիքյան

ԱԳՈՒԼՅԱՆ Ն.– Մե՛նք ենք շնորհակալ, որ Հիմնադրամի աշխատակազմն այդքան նվիրված է մեր միասնական համազգային գործին, որ այդքան համերաշխ ու սրտացավությամբ թե՛ Արցախում բնակվելիս, թե՛ բռնագաղթից հետո՝ Հայաստանում օգնում է արցախցի մեր եղբայրներին ու քույրերին, նրանց երեխաներին:

Հիմա դառնանք Ձեզ, սիրելի՛ Խորեն Մարդոյան: Դուք ընդամենը մի երկու ամիս առաջ էիք Հայաստանում անգնահատելի օգնության ծրագրով և առաջնորդում էիք կանադական «Global Medic» մարդասիրական կազմակերպության գործուղած ներկայացուցիչներին, որոնց հետ այցելեցիք Հայաստանում ապաստանած արցախցիներին: Լավ է, որ Ձեզ հաճախ ենք տեսնում Հայաստանում, բայց ինչպե՞ս եք զուգակցում ժամանակակից բարդ տեխնոլոգիաների, արդիական ինքնաթիռների օդաչուի աշխատանքը մեր ազգային ցավի ու ողբերգության հաղթահարման, Ձեր մարդասիրական ու հայրենասիրական գործունեության հետ:

ՄԱՐԴՈՅԱՆ Խ.- Նախ՝ թույլ տվեք շնորհակալություն հայտնել հարցազրույցով Ձեր թերթում հանդես գալու հնարավորության համար, երկրորդն էլ մի ճշտում պիտի անեմ՝ ես օդաչու չեմ:

ԹՂԹ.-Կներեք, մեր թռուցիկ զրույցների ընթացքում Դուք հաճախ էիք խոսում արդի տեխնոլոգիաներից ու ինքնաթիռ վարելուց, թերևս դա է թյուրիմացության պատճառը:

ՄԱՐԴՈՅԱՆ Խ.-Թերևս: Ճշմարիտն այս է. շուրջ հինգ տարի աշխատել եմ բանկային համակարգում, հիմա էլ անշարժ գույքի գործակալությունում: Ես անշարժ գույքի մասնագետ եմ, իսկ օդաչուի մասնագիտությունն ինձ համար պարզապես հոբբի է:

Ես արյան ու հողի կանչով եմ այստեղ, ճիշտ կուզեք՝ Հայաստանից չեմ էլ գնացել. ուր էլ լինեմ՝ Հայաստանում եմ:

Այո՛, Դուք իրավացի եք. «Global Medic»-ի ներկայացուցչական կազմին ես երկու ամիս առաջ ուղեկցել եմ Հայաստանում: Նրանք եկել էին ուսումնասիրելու, ճանաչելու հային ու Հայաստանը երկրում ստեղծված իրավիճակը ավելի քան 100 հազար բռնի տեղահանված արցախցիներին ներառելուց հետո: Նրանց հետ միասին այցելել ենք Հայաստանում տեղակայված արցախցիներին, զրուցել նրանց հետ, հանձնել բերած առաջին անհրաժեշտության օգնություն, շոշափել նրանց տրամադրությունները, պարզել՝ ինչպես են հարմարվում նոր պայմաններին, իմացել նրանց կարիքներն ու մտահոգությունները: Արցախցի մեր եղբայրներն ու քույրերը իրոք հայտնվել են աննախանձելի վիճակում, բայց առանձնապես պահանջներ չեն առաջադրում, հպարտ են, արժանապատիվ և ինքնասեր: Կանադական «Global Medic»-ը այսօր համաշխարհային մարդասիրական մեծ կազմակերպություն է, օգնություն է ցուցաբերում աշխարհի տարբեր երկրներում պատերազմներից, երկրաշարժերից, ջրհեղեղներից ու այլ աղետներից դուժած կարիքավորներին:

Եվ մենք, որպես տորոնտահայ համայնք, այս կազմակերպության հետ սկսեցինք համագործակցել 2016թ. քառօրյա պատերազմից հետո: Տարիների քրտնաջան աշխատանք պահանջվեց, որ մենք կարողանանք այդ կազմակերպությանը Հայաստան բերել ու այժմ էլ նպատակամղել տեղահանված կարիքավոր արցախցիներին օգնելու: Ասեմ, որ նրան խիստ վրդովված ու դառնացած էին ազերի թուրքերի՝ նախամարդուն բնորոշ վայրագություններից և հիացած էին Հայաստանով ու անընկճելի հայերով: Նրանց Food Project-Սննդի ծրագիրը, որ Հայաստանում իրականացվում է երկու կազմակերպությունների՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» և «Հայ Օգնության Միության» հետ՝ ես եմ համակարգում:

Բայց իմ խնդիրը դրանով չի սահմանափակվում:

Ես այստեղ եմ, որովհետև կան նոր մարտահրավերներ, և այստեղ կլինեմ, քանի դեռ հայաստանաբնակ արցախցիները մեր օգնության կարիքն ունեն: Ես լավ եմ հասկանում պրն. Գ. Մելիքյանին:

ԹՂԹ. -Հարգելի՛ պարոնայք, Նիկ Ագուլյան և Խորեն Մարդոյան, շնորհակալություն հաճելի ու բովանդակալից հարցազրույցի համար: Ամեն Հայաստան գալով՝ Դուք իրագործում եք մի լավ ծրագիր, բերում եք մի լավ հույս, որ թոթափում է բոլորիս ընկճվածությունը: Հուսանք՝ մեր ժողովրդի ու հայրենիքի ներկա ձախողումներն ու նեղությունները ժամանակավոր են ու հաղթահարելի: Հրաժեշտից առաջ ուզում եմ հիշեցնել մեծ բանաստեղծի հուսադրող պատգամը.

Հայակործան դարեր անցան՝ այս էլ կանցնի:

Ուրեմն՝ տոկանք ու համբերենք:

Հաջողություն Ձեր ազգանվեր ու հայրենանվեր գործին: Հաճախ եկեք Հայաստան:

Ստեֆանը "Էկոֆուդ"-ի արկղերով

Կեթլինը, Սուրեն Սեփանյանը, և Խորեն Մարդոյանը սննդի արկղերով

Խորեն Մարդոյանը հիգիենիկ պարագաներ բաժանելիս

«Global Medic» is visiting Armenia again

In July, the second team of «Global Medic» organization arrived in Yerevan, Armenia.

Board members and Executive Director of «Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh» as well as the representatives of «Global Medic» organization, David and Lori visited the forcibly displaced families of Artsakh, beneficiaries of the foundation.

Visits were made to historical Aghdzk, where beneficiaries Liana Safaryan and Ishkhan Sargsyan reside with their 9 children, to Katnaghbyur, where Arevik Grigorian and Ernest Khosrovyan reside with their 9 children. The team also visited the forcibly displaced families in Getashen village of Armavir region and various regions of Yerevan.

Clothing, hygiene supplies and locally manufactured food were distributed to the families. «Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh» expresses its deep gratitude to the organization for collaboration and support. Families were provided t-shirts contributed by our compatriots Tatev Manukyan and Nvard Arakelyan from US. The board expresses its deep gratitude to them. During the visit, our compatriot, public health specialist, lecturer at Simon Fraser University in Canada, Kate Tairyan joined us.

Locally produced food purchased with the funds of «Global Medic» was delivered to the families.

Representatives of «Global Medic», David and Lori met with the leader of the «Holy Struggle», Archbishop Bagrat Galstanyan. Holy Father expressed his gratitude and blessed them for their humanitarian activities and dedication.

Board of the foundation expresses its deep gratitude to our compatriot, Khoren Mardoyan, who lives in Canada, for his unconditional dedication.

With the family of Lianna Safaryan and Ishkhan Sargsyan-9 children

With Arevik Grigoryan family-9 children

With Armine Badalyan and Armen Vartanian family - 6 children

At "EcoFood" factory, signing a contract

Letter from David:

Hello Gurgen. Hope you are well and things are proceeding with the families. I just wanted to say again, what a privilege it was working with you, and I hope you work well with the next team coming soon.

With Armine Badalyan and Armen Vartanian family - 6 children

Lori nd David at the factory showroom

With Ordubekian family-9 children

With Danielyan Nubar Family-3 children

ԵՐԳԻ ԴԻՑՈՒՀԻՆ

Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանը հինգ տարեկան է

Հայ մշակույթի բազմադարյա պատմության մեջ բացառիկ ՀՀ ժողովրդական արտիստ երևույթ է Լուսինե Զաքարյանը: Նա եկավ, որ մեր և աշխարհի բեմերում դասական ու կոմիտասյան երաժշտության հետ միասին հնչեցնի միջնադարյան հայ հոգևոր երգը: Եվ իր աստվածաշնորհ երգեցողությամբ նվիրվեց հայ տոհմիկ երաժշտությանը: Ազգին նոր մեկնությամբ ու բացառիկ կատարումով ընծայեց մեր միջնադարյան տաղերն ու շարականները, դարձավ ազգային զարթոնքի մեծագույն ոգեշնչողներից մեկը: Իր այս առաքելությունն իրականացնելու ճանապարհին նրա հիմնական խորհրդատուն, անբաժան ընկերը, ամուսինը՝ ***Խորեն Պալյանն*** էր՝ մանկավարժ, շարականագետ, ծիսագետ, գրաբարագետ, ազգային ժառանգության խոշոր գիտակ և պահապան… Աշխարհի որ բեմում կամ հայկական որ գաղթօջախում էլ երգում էին Լուսինեն և Խորենը, հոգեպես վերածնվում էր հայ մարդը, իսկ օտարը ճանաչում էր ա՛յն ժողովրդին, որը եվրոպական Վերածննդից դեռ մի քանի դար առաջ այն կանխող Գրիգոր Նարեկացու պես հսկա է ծնել… Եվ այս գանձերը նրանք սփռում էին հայ երգեհոնային երաժշտության լեգենդներ Վահագն Ստամբոլցյանի, Պերճ Ժամկոչյանի, Լևոն Աբրահամյանի հետ միասին:

Լուսինեն ծանոթ էր համաշխարհային երաժշտության գանձարանին: Բայց իր կյանքի բոլոր օրերը նվիրեց ի՛ր ազգի մշակույթին: Եվ այս մասին պահպանված միակ հարցազրույցում նա ասել է.

– Շատ եմ սիրում Բախի, Հենդելի, Մոցարտի և այլ մեծերի ստեղծագործությունները, բայց իմ հոգուն առավել մոտ են մեր միջնադարյան աննման գոհարները և, մանավանդ, Խորենացու, Նարեկացու, Շնորհալու հոգեզմայլ մեղեդիները: Ես շատ ուրախ եմ, որ կարողացա մի փոքր բաժին բերել ի նպաստ Կոմիտասի հիմնադրամի, քանի որ այստեղ Կոմիտասի անունը կա: Կոմիտասն այն հանճարն է, որի առաջ պետք է խոնարհվել:

Այսպես ապրեց հայ հոգևոր երգի մեծ առաքյալը՝ Լուսինե Զաքարյանը: Միանգամայն ճիշտ բնորոշում են տվել նրա կյանքին ու գործունեությանը մեծերը՝ Պարույր Սևակը, Արամ Խաչատրյանը, ամերիկացի նկարիչ Ռոքուել Քենտը, պրոֆեսոր Սվետլանա Նավասարդյանը և շա՛տ շատերը:

«-Նա պետք է երգեր Օլիմպոսում, աստվածների համար… Լսում էիր զմայլված ու չգիտեիր, թե ինչն է ավելի գեղեցիկ՝ Տա՞ղը, թե՞ Ձայնը: Պարզապես Տաղը գտել էր իր Ձայնը, իր Հոգին, որի մեջ ամփոփվել, բյուրեղացել էր՝ հեռու հնքից ունայնության…

Ու թև առած սավառնում էր հրաշք այդ Ձայն-Հոգին ալեհեր գմբեթի վրայով, հալվում մեր սար ու ձորերի

մշուշների մեջ, դառնում կաթիլք, ցող, անձրև, շունչ ու արյուն: Ու սփռում էր Սեր…

Բիբլիական Ձայն էր՝ Բիբլիական Հողի վրա…»:

Հինգ տարի առաջ բացվեց Լուսինե Զաքարյան տուն-թանգարանը: Պահպանվել է ավելի քան քսան տարվա մի հեռուստահաղորդում, որտեղ Խորեն Պալյանը հյուր էր Համլետ Ղուշչյանին: Նա ասել էր.

-Ես ապրում եմ, որ ապրեցնեմ Լուսինեի հիշատակը: Իմ կյանքի նպատակը մեր տունը Լուսինեի անվան տուն - թանգարան դարձնելն է…

Սակայն ոչ ոք չօգնեց հայ հոգևոր երգի պահապանին՝ Խորեն Պալյանին: Նրա կյանքի օրոք այս նվիրական իղձը, ցավոք, մնաց անկատար: Եվ միայն տարիներ անց՝ Խորեն Պալյանի եղբորորդի Ռաֆֆի Պալյանի շնորհիվ՝ Երևանի Կողբացի 42/3 հասցեում գտնվող այն բնակարանը, ուր ապրել ու ստեղծագործել են Լուսինե Զաքարյանը և Խորեն Պալյանը, վերածվեց թանգարանի. իրականություն դարձավ նրանց նվիրական երազանքը:

2019 թ. հունիսի 1-ին՝ Լուսինեի ծննդյան օրը, բացվեց Լուսինե Զաքարյան տուն – թանգարանը: Տնօրեն նշանակվեց Ռաֆֆի Պալյանին ԵՊԲ ինստիտուտում դասավանդած, այժմ փիլ. գիտ. դոկտոր, արվեստի սոցիոլոգ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի հայաստանյան մասնաճյուղի(Հայֆա) վարիչ Սուսաննա Դավթյանը, ով 1965թ.-ից ի վեր նվագակցել է Խորեն Պալյանին, երբեմն էլ՝ Լուսինե Զաքարյանին:

Այս հինգ տարիների ընթացքում Սուսաննա Դավթյանի ջանքերով թանգարանը փայլել է իր գործունեությամբ՝ վերածվելով հոգևոր-մշակութային կենտրոնի, յուրօրինակ փնտրելի մի վերնատան: Այցելուներն անխտիր

«Այցելուների հաշվառման և տպավորությունների գրանցման մատյանում» ԽՍՀՄ ժողովրդական արտիստ,

ՀՀ Ազգային հերոս, պրոֆեսոր, Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը գրել է. *«Լուսինե Զաքարյանի անունը հավերժացնող այս թանգարանի տնօրեն Սուսաննա Դավթյանին երախտապարտ ենք ազգովի»:*

…2024 թ. հունիսի 1-ին նախատեսված էր թանգարանի 5-ամյակին նվիրված մեծ միջոցառում, որը պետք է կայանար Երևանի Կոմիտասի անվան Կամերային երաժշտության ազգային կենտրոնում: Սակայն մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներով պայմանավորված՝ երգչուհու հիշատակը ոգեկոչելու և թանգարանի 5-ամյակը տոնելու համար Լուսինեի ու Խորենի մտերիմները հավաքվեցին թանգարանում՝ փոխանցելու իրենց հուշերը, խոսելու հայ մշակույթը և մեր ազգային ժառանգությունը պահպանելու հիմնախնդիրների մասին: ԱՄՆ-ից ժամանել էր նաև դոկտոր Ռաֆֆի Պալյանը:

Լեփ-լեցուն սրահում միջոցառումն սկսվեց «Շողակաթ» հեռուստաընկերության 21 բոպեանոց տեսահոլովակի ցուցադրությամբ, որը նվիրված էր Լուսինե Զաքարյանին և թանգարանին:

Ռաֆֆի Պալյանն իր խոսքում ընդգծեց.

-Մեր հույսն է, որ այս փոքրիկ թանգարանը վերածվի մատուռի: Մեր նպատակն է, որ հայ նոր սերունդը հաղորդակցվի մեր հոգևոր ժառանգությանը, որ թանգարանը սատար լինի հոգևոր երաժշտության սիրահար շնորհալի երիտասարդությանը: Ուզում եմ շնորհակալություն հայտնել տիկին Սուսաննա Դավթյանին, որ այս հինգ տարիների ընթացքում կարողացավ իր հոգին, էությունը, սերը ներդնել և կայացնել ու արհեստավարժորեն կանգուն պահել ու ծաղկեցնել այս թանգարանը: Նույնիսկ քովիդյան համաճարակի ժամանակներում թանգարանի աշխատանքը կանգ չառավ: Նրա նպատակասլաց ջանքերի շնորհիվ այսօր ունեցանք Լուսինե Զաքարյանի անվան լսարան Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, Երևանի փողոցներից մեկը կոչվեց Լուսինե Զաքարյանի անունով, անցկացվեց Լուսինե Զաքարյանին նվիրված երգի համահայկական առաջին փառատոնը, որը բացահայտեց մի մեծ խումբ շնորհալի երգիչների, յուրաքանչյուր տարի 5 – 6 ուսանող արժանանում են Լուսինե Զաքարյանի և Խորեն Պալյանի անվան անվանական կրթաթոշակների՝ «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հովանավորությամբ: Շնորհակալ եմ նաև բոլոր այն անձանց, ովքեր տարիներ շարունակ աջակցեցին, մասնակից եղան թանգարանի ստեղծմանը:

Ռաֆֆի Պալյանը իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց նաև Արմեն Ամիրյանին, Արև Սամուելյանին, հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ իրավաբան Էդիկ Ավետիսյանին, պրոֆեսորներ Գուրգեն Մելիքյանին, Արծրուն Ավագյանին, Սամվել Մուրադյանին…

Միջոցառմանը ներկա ՀՀ Մշակույթի նախկին նախարար Արմեն Ամիրյանն ասաց .

-Ի՞նչ էր մեզանից պահանջվում՝ տրամադրել ֆինանս, կահավորանք…Բայց բոլոր հարցերը լուծել էր Ռաֆֆի Պալյանը: Փառք ու պատիվ քեզ, սիրելի Ռաֆֆի: Պատահական չէ, որ Վազգեն Ա Վեհափառն ասում էր. «Երբ Լուսինեն երգում է «Սուրբ-Սուրբ»-ը, երկնքից հրեշտակների մի հսկա խումբ է իջնում Մայր Աթոռ ու փառաբանում Աստծուն»: Հիմա էլ, համոզված եմ, որ այստեղ՝ այս պահին հրեշտակների մի մեծ խումբ կա, և գլխավոր հրեշտակ Լուսինե Զաքարյանի առաջնորդությամբ մեզ կարող են հաղորդակից դարձնել հայ հոգևոր երաժշտությանը:

Ներկայացնենք մի դրվագ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մաքսենա Հարությունյանի խոսքից, ով եկել էր Նյու-Յորքից.

- Բժշկական համալսարանում ստեղծվել էր հասարակական մասնագիտությունների ֆակուլտետ (ՀՄՖ), որի դեկան ինձ էին նշանակել, իսկ արվեստագիտության բաժնի վարիչը Սուսաննա Դավթյանն էր, ով այդ ժամանակներում նվագակցում էր Խորեն Պալյանին և մտերիմ էր նրանց ընտանիքին: Որոշեցինք Սուսաննայի միջոցով Խորենին հրավիրել մեր ֆակուլտետ՝ դասավանդելու գրաբար, որ ուսանողությունը մեր ոսկեդենիկ լեզվի ու գրականության, գիտության ու մշակույթի հետ անմիջական շփում ունենա:



ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի Լուսինե Զաքարյանի հուշատախտակը թանգարանի պատին

Պատկերացրեք՝ Խորենը համաձայնեց: Եվ որքա՜ն էին ուսանողները նրան սիրում, որովհետև ոչ միայն դասավանդում էր, այլև ուսանողներին տանում էր եկեղեցիները, նրանց սովորեցնում էր հայ երգը: Այդպիսով նրանք երգում ու հաղորդակցվում էին մեր ազգային հարստությանը:

Շատերը, յուրացնելով գրաբարը, գնում էին Մատենադարան ու թարգմանում էին միջնադարյան հայ բժշկապետերի աշխատությունները: Շատ կարևոր աշխատանք էր դա, որ սիրով անում էր Խորեն Պալյանը:

Տարիներ առաջ որոշվեց երաժշտական կրթօջախներում և Երևանի պետական համալսարանում սահմանել Լուսինե Զաքարյանի և Խորեն Պալյանի անվանական կրթաթոշակներ: Սա գործող կայուն ծրագիր է, որը արվեստի և բնասիրության աշխարհ ոտք դնող նոր սերնդին խրախուսում, ուղղորդում է ընթանալ Լուսինե Զաքարյանի և Խորեն Պալյանի նվիրական հետքերով:

Այդ շնորհալիները լավ են հիշում, որ իրենց վերընթացը թանգարանի՛ շնորհած՝ Լուսինե Զաքարյանի անվանական կրթաթոշակով սկսվեց:

Հունիսի 3-ին տուն-թանգարանում կայացած միջոցառմանը, որ նվիրված էր Լ. Զաքարյանի ծննդյան օրվան, նույնպես հաճելի անակնկալ եղավ. միջոցառմանը երգով հանդես եկած ուսանողների համար.նրանք արժանացան «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» դրամական պարգևին, որ տեղում որոշեցին շնորհել հիմնադրամի հոգաբարձության խորհրդի ներկա անդամները:

Միջոցառմանը հնչած ելույթներից առանձնացնենք նաև պրոֆեսոր Արծրուն Ավագյանի խոսքը, ով նաև Լուսինե Զաքարյան տուն –թանգարանի հոգաբարձուների խորհրդի անդամներից է:

– *«Շողակաթ» ընկերության ֆիլմի վերնագրում պետք է ավելացնել Խորեն Պալյանի անունը,*– ասաց նա ու շարունակեց. -*ուզում եմ առանձնահատուկ ընդգծել հարգարժան Ռաֆֆի Պալյանի ջանքերը, որ Գուրգեն Մելիքյանի, Սամվել Մուրադյանի հետ ներդրեց հիմնելու այս թանգարանը: Այսօր, այո՛, կայացել է Լուսինե Զաքարյան տուն – թանգարանը: Կայացել է՝ շնորհիվ մեր Սուսաննայի: Դուռը փակ չէ, որովհետև ձեզ նման մարդիկ են գալիս – գնում:*

Սերունդներին մեր հոգևոր ժառանգությանը հաղորդակից դարձնելու համար կյանքի կոչվող ծրագրերից մեկն էլ համագործակցությունն է երաժշտական տարբեր հաստատությունների հետ՝ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Առնո Բաբաջանյանի, Ռոմանոս Մելիքյանի, Շառլ Ազնավուրի անվան երաժշտական ուսումնարաններ, այս բոլորի հետ՝ նաև Երևանի պետական համալսարան…

Լուսինե Զաքարյանը և Խորեն Պալյանը

Ամեն տարի թանգարանը հեղինակավոր մասնագետներից կազմված ժյուրիով պարբերաբար անցկացնում է մրցույթ:

Հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ Լուսինե Զաքարյանի անվանական կրթաթոշակի արժանացած որոշ ուսանողներ այսօր, որպես մեներգիչներ, երգում են տարբեր բեմահարթակներում:

Միջոցառման ավարտին հյուրասիրության սեղանի շուրջ շարունակվեցին մտերիմների ջերմ զրույցներն ու հուշապատումները Լուսինեի ու Խորենի մասին:

Լուսինե Զաքարյան տուն-թանգարանն արդեն դարձել է հայ հոգևոր երգը պահպանելու և տարածելու մի կանթեղ, որը երկար է վառվելու և լուսավորելու սերունդների ճանապարհը:

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ Ժուռնալիստների միության անդամ

Արվեստագետի անկյուն

Հիմնադրամիս հոգաբարձության խորհրդի որոշմամբ «Բարեգործի» այս և հաջորդ համարներում կտպագրվեն ՀՀ վաստակավոր նկարիչ, հոգաբարձության խորհրդի անդամ, նվիրյալ բարերար Շմավոն Շմավոնյանի գեղանկարներից։

Արարատը գարնանը՝ Արարատյան դաշտից

Երախտագետի անկյուն

ՆԱՄԱԿ ՋՈՐՋ և ՔԵՐՈՒԼԱՆ ՆԱՋԱՐՅԱՆՆԵՐԻՆ

Բարև Ձեզ, սիրելի Ջորջ և Քերոլան Նաջարյաններ:
Ձեզ գրում է Արցախի Մարտունու շրջանի Մաճկալաշենի գյուղրնակչուհի Վերա Ալեքսանյանը:

Մենք մեր հայրենիքում ապրել ենք պայքարելով, սակայն հույսով և հավատով, որ ամեն ինչ լավ է լինելու:
Ջորս պատերազմ ենք տեսել, բայց չենք պատկերացրել մեզ առանց ծննդավայր, ունեզուրկ, տնանկ…Ես իմ երեխաներին ու աշակերտներիս դաստիարակել եմ հայրենասիրությամբ, «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ»-ը մեր կարգախոսն էր: Իսկ հիմա դարձել ենք գաղթական, կոտրված սրտեր, անորոշություն…

Ինչպե՞ս ոտքի կանգնել, ինչպե՞ս շարունակել ապրել…

Այս դժվարին պայմաններում իմ ընտանիքին երկրորդ անգամ օգնության ձեռք մեկնեցիք:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» որդուս՝ Դավիթ Մելքումյանի հաշվեհամարին փոխանցել է 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում Ձեզ՝ Ձեր անմնացորդ նվիրումի ու զորակցության համար:

Մաղթում եմ Ձեզ արցախյան երկարակեցություն, հաջողություններ Ձեր հայրենանվեր գործունեության մեջ:

Լավագույն մաղթանքներով՝ ստորագրություն

(Վերա Ալեքսանյան)

7.06. 2024

Տ Խ Ր ՈՒ Ն Ի

Մեր հիմնադրամի լավագույն և նվիրյալ բարեկամ պրն.Հարմիկ Տեր-Հովհաննիսյանը կյանքին հրաժեշտ է տվել մեկ տարի առաջ: Նա ծնվել էր 1928 թ. հոկտեմբերի 18-ին Իրանի Թավրիզ քաղաքում՝ Հովհաննեսի և Նունյայի համերաշխ հայ ընտանիքում: Սովորել է Թավրիզի միջնակարգ դպրոցում, ուսումը ընդհատելով՝ վերապատրաստվել է որպես հաստոցագործ և տարիների փորձառությամբ դարձել հմուտ մասնագետ՝ միշտ գնահատվելով իր արհեստավարժ գործունեությամբ: Հարմիկը աչքի էր ընկնում իր յուրահատուկ ընդունակությամբ պարարվեստի և սպորտի բնագավառներում վաստակելով բազմաթիվ շքանշաններ՝ վազքի, թռիչքի և ծանրամարտի սպորտաձևերում: Նա հայտնի էր նաև որպես Թավրիզի հայկական ֆուտբոլային թիմի դարպասապահ:

Հարմիկի աշխատանքային գործունեությունը տևել է 40 տարի Իրանում և 7 տարի Լոս Անջելեսում:

Վերջին լուսանկարը պրն. Հարմիկի հետ, մայիս 2023

Հանդիպելով իր միակ սեր Նորամայրին՝ 1952 թ. ամուսնանում են՝ ստեղծելով օրինակելի ընտանիք, ուր վայելել են 70 տարվա համատեղ կյանք: Ծնել և դաստիարակել են երկու զավակ՝ Նորայր և Հրաչ, որոնք կազմել են իրենց ընտանիքները և մասնակցել մեր հիմնադրամի բարեգործական ծրագրերին: Նորամայրն, օրինակ, Հիմնադրամիս համար ցայսօր օրը մեկ դոլար է հավաքում և տարեվերջին ուղարկում մեզ: Այս իրողությանն անդրադարձ կա մեր թերթի նախորդ համարներից մեկում:

Սեպտեմբերի 10-ը արժանավոր և օրինակելի հայի՝ Հարմիկ Տեր-Հովհաննիսյանի մահվան տարելիցն է:

Գուրգեն Մելիքյանը Տիկ. Նորամայրի հետ, մայիս 2023

Այդ առթիվ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհուրդն իր անկեղծ վշտակցությունն է հայտնում Տիկ. Նորամայր Տեր-Հովհաննիսյանին ու բոլոր հարազատներին:

Պրն. Հարմիկի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում որպես հայրենասեր, բարի և նվիրված անձնավորություն: Նրան ևս պատշաճում է ավանդական աղոթքի «Ցիշատակն արդարոյն օրհնեալ եղիցի» կարգախոսը:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

2024 թ. ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N.	Ամսաթիվ	Անուն, ազգանուն	Վճարման նպատակ	Գումար	Համարժեք
1	1/16/2024	Բաբախանի Սերոժ Ավետիսի	Նվիրատվություն	121647	300 USD
2	1/19/2024	Վանեցյան Կարեն Ռոբերտի	Օգնություն	10131250	25000 USD
3	1/26/2024	Թեքեյան կենտրոն հիմնադրամ	Նվիրատվություն	4205250	
4	1/29/2024	Ազիզյան Սոֆի	Ծ Ծմավոնյանի «Արա-ռատ» ալբոմի համար	20000	
5	1/29/2024	Այվազյան Արմեն	Օգնություն	100125	
6	2/8/2024	Քահվե Սաիթ	Օգնություն Արցախի հայրենակիցներին	600000	
7	2/13/2024	Գրիգորյան Ալեքսանդր	Բարեգործություն	1000000	
8	2/15/2024	Panap-Aliancia ochrany mieru stara Vajnorska	Օգնություն	1497242	3466 EUR
9	2/27/2024	Մելիքյան Գուրգեն	Anna Stepanian Mulray սիրուն ***Անիկի*** հիշատա-կին՝ 26/02/24:	20000	
10	3/5/2024	Հովհաննիսյան Վոլոդյա	Բարեգործություն	60000	
11	4/5/2024	Հովհաննիսյան Վոլոդյա	Բարեգործություն	60000	
12	5/13/2024	«Թեքեյան կենտրոն» հիմնադրամ	Նվիրատվություն	2735000	
13	5/16/2024	Աղաջանյան Արա	Արմտեքս ՍՊԸ փոխառության վերադարձ	100000	
14	5/16/2024	LM ANONYMOUS	Օգնություն	192000	500 USD
15	5/21/2024	Ֆլորա Սարյան	Օգնություն	52200	
16	5/27/2024	Զարեհ Մարտին	Օգնություն	192000	500 USD
17	6/7/2024	Նիկողոս Ագուլյան	Օգնություն Nikoghos Agulian	192375	500 USD
18	6/10/2024	Հովհաննիսյան Վոլոդյա	Բարեգործություն	60000	
19	6/28/2024	Մելիքյան Գուրգեն	Ծառերի ծրագիր՝ հայրենիքի նվիրյալ, մեծ գիտնական **Մարգար Գրիգորյանի** հիշատակին:	20000	
20	6/28/2024	Նիկողոս Ագուլյան	Օգնություն Nikoghos Agulian	154000	400 USD
21	08/21/2024	«Թեքեյան կենտրոն» հիմնադրամ	Օգնություն	2678350	
22	08/29/2024	Միրզոյան Մնացական	Օգնություն	100000	
23	08/30/2024	Փիրջանյան Վահրամ	Օգնություն	150000	
			Ընդամենը	**24,441,439**	

Հիմնադրամի հոգաբարձության խորհրդի՝ Արցախից բռնազաղթված մեր հայրենակիցներին օգնելու կոչին այսպես են արձագանքում համալսարանականները.

Հ/հ	Ամսաթիվ	Ֆակուլտետ	Նպատակ	Գումար
1	1/16/24	ԵՊՀ երկրաբան. և հետազոտ. կենտրոն ՍՊԸ	Օգնություն	300000
2	06/17-06/24	ԵՊՀ Իրավագիտության ֆակ.	Օգնություն	424000
3	6/18/2024	Մարտիրոսյան Տաթևիկ Քաղաքացիական իրավ ամբիոն	Օգնություն	75000
4	6/19/2024	Աբրահամյան Ռոզա	Օգնություն	5000
5	6/20/2024	Աբրահամյան Ռոզա Քրեական իրավ. ամբիոն	Օգնություն	70000
6	6/21/2024	Վաղարշյան Ռուզաննա ԵՊՀ իրավագիտ. ֆակ	Օգնություն	20000
7	6/21/2024	Աբրահամյան Ռոզա Պետ և Իրավ. ամբիոն	Օգնություն	25000
8	6/21/2024	Այվազյան Վարդան	Օգնություն	64000
9	6/27/2024	Սողոմոնյան Դիանա ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ	Օգնություն	93700
10	6/28/2024	Մելիքյան Գուրգեն ԵՊՀ մանկ. կրթ. զարգացման կենտրոն	Օգնություն	100000
11	7/11/2024	Բարսեղյան Վիկտորիա	Օգնություն	10000
12	7/18/2024	Մուրադյան Մարիա	Օգնություն	2000
13	7/18/2024	ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ Ռուբեն Մելքոնյան	Օգնություն	210000
14	7/19/2024	Հայրապետյան Դավիթ	Օգնություն	2000
13	7/22/2024	ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Օգնություն	186000
15	7/22/2024	ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Օգնություն	365000
16	07/28/2024	ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն	Օգնություն	100000
17	08/26/2024	ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ Եղիազարյան Վարդան	Օգնություն	100000
18	08/29/2024	ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ	Օգնություն	115000

Ընդամենը՝ 2,266,700

Շարունակելի...

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝ ԱՎԱԳՅԱՆ Ա. բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ. բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ Ալ. պ. գ. թ., պրոֆեսոր

Համարի նյութերը, շարվածքը, լուսանկարները, ձևավորումը Ս. Մուրադյանի
Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:
Խմբագրության հասցեն՝
Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակ. մասնաշենք, 212 սենյակ:
Հեռ.՝ 060 710 617, 055 522936, 552537: